

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ
13.07.2020թ. կայացված թիվ 00781-59 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<< 08 >> 09 2020թ. 7-13- 10898

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս,
վերանայելով Արտյոմ Շահբազյանի ՄԴ/111365-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված
նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Վայոց Ձորի մարզի Մալիշկա գյուղի 5-րդ փողոցի 16-րդ տան բնակիչ Արտյոմ
Շահբազյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական
իրավախախտման գործի վերաբերյալ 13.07.2020թ. կայացված թիվ 00781-59 որոշումը՝ նշելով,
որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ: Միաժամանակ
հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման գործի
վերաբերյալ 13.07.2020թ. կայացված թիվ 00781-59 որոշումը ենթակա է կատարման հետևյալ
պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասի
համաձայն՝ արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության
ընթացքում ազատ տեղաշարժվելու պայմանները, պահանջները խախտելը՝ առաջացնում է
տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր
սահմանափակումների վերաբերյալ պարետի 03.05.2020թ. N63 որոշման 5-րդ կետի
համաձայն՝ ՀՀ տարածքում պարտադիր է հանրային բաց վայրերում դիմակի առկայությունը,
իսկ անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում՝
դիմակ կրելը, եթե վարորդից բացի մեքենայում առկա է առնվազն մեկ ուղևոր:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 13.07.2020թ. Երևան – Սևան 16կմ
ճանապարհահատվածում քաղաքացի Արտյոմ Շահբազյանի վարած ավտոմոբիլը կանգնեցվել
է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական
վաշտի 1-ին սպայական դասակի տեսուչներ, ոստիկանության կապիտաններ Դ.Սարգսյանի և
Լ.Թևոսյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պարետի 03.05.2020թ. N63 որոշման
5-րդ կետի պահանջի խախտման համար, այն է՝ վարորդն անձնական օգտագործման
մարդատար տրանսպորտային միջոցում ուղևորի առկայությամբ չի կրել դիմակ: Վարչական
իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասով կայացվել է
վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 00781-59 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման
համաձայն՝ քաղաքացի Արտյոմ Շահբազյանի կողմից կատարված իրավախախտումը
հիմնավորող՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներ առկա չեն,
սակայն իրավախախտումն եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ
տեսանելի, ինչի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն և
կայացվել թիվ 00781-59 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են,

որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասի հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 13.07.2020թ. կայացված թիվ 00781-59 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արտյոմ Շահբազյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:



Ե. Կարապետյան

Կատարող՝ Ա. Մարգարյան
Հեռ. 011-54-47-83